

ՊԵՏՐՈՒՅԵ-2014

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐԿՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՓԱՏԱԹՈՒՂԹԸ

Դեկտեմբերի 11-ի երեկոյան, Վրաստանի խորհրդարանը՝ 86 կողմ եւ ոչ մի դեմ ձայներով, ընդունեց «2014 թվականի պետական բյուջեի մասին» օրենքը, ըստ որի, եկամուտները կկազմեն 7 միլիարդ 319 միլիոն լարի (շուրջ 4 մլրդ 357 մլն դոլար), ինչը 103 միլիոն լարիով (61 մլն 310 հազար դոլար) պակաս է 2013 թվականի համապատասխան ցուցանիշից:

Ընդունված փաստաթղթի համաձայն, ծախսերի ծավալը կկազմի 7 միլիարդ 539,6 միլիոն լարի (4 մլրդ 500 մլն դոլար), ինչը 291 միլիոն լարիով (173,2 մլն դոլար) ավելի է ընթացիկ տարվա համեմատ ցուցանիշից:

Օրենքի նախագծին կից բացատրական գրության մեջ ասված է, որ, ներկայացված նախագծին համապատասխան, 2014 թվականի ՀՆԱ-ի իրական աճի կանխատեսումը կկազմի 5 տոկոս, իսկ դեֆլյատորը՝ 3,5 տոկոս: Անվանական արտահայտությամբ, ՀՆԱ-ն կկազմի 29,3 միլիարդ լարի (17 մլրդ 441 մլն դոլար): Ըստ հաստատված նախագծի, բյուջեն կազմում է 9,050 միլիարդ լարի:

Քվեարկությանը չեն մասնակցել խորհրդարանա-



կան փոքրամասնության ներկայացուցիչները, ովքեր ի նշան բողոքի լքել էին դահլիճը: Դա տեղի ունեցավ նրանից հետո, երբ Ուկրաինայում իրավիճակի քննարկման ընթացքում մեծամասնության եւ փոքրամասնության ներկայացուցիչների միջեւ տեղի ունեցավ իրարանցում:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

### ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

## ԲԱՑՎԵՑ 400 ԿԻԼՈՎՈՒՆՏԱՆՈՑ ԱԽԱԼՑԻՒՄԵ-ԲՈՐՉԻՄ ԷԼԵԿՏՐԱԶՆԱՊՈՐՏԱՆ ՆՈՐ ԳԻԾԸ



Դեկտեմբերի 11-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին եւ փոխվարչապետ, Վրաստանի էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն, Ախալցխայի շրջանի Զիկլիլա գյուղում բացեցին Վրաստանի եւ Թուրքիայի էլեկտրահամակարգերը միացնող Ախալցխա-Բորչխա 400 կիլովոլտանոց էլեկտրահաղորդման գիծը եւ «Ախալցխա-500» էլեկտրաէներգակայանը:

«Այսօր կարելու օր է ոչ միայն Վրաստանի, այլեւ տարածաշրջանի համար: Այսօր մենք պաշտոնապես բացում ենք Ախալցխայի ենթացանցը, որն «էլեկտրահաղորդման սեւծովյան գծի» նախագծի բաղկացուցիչ մասն է: Այդ նախագիծը

շատ կարելու է մեր տարածաշրջանի էներգետիկական զարգացման եւ էներգամուտայնացման համար»,- հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին:

«Էլեկտրահաղորդման սեւծովյան գծի» նախագծի բաղկացուցիչ մասն է: Այդ նախագիծը

### ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

## ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Դեկտեմբերի 13-ին Վրաստանի խորհրդարանը իր լիազույժար նիստում, առաջին ընթերցմամբ, ընդունեց տեղական ինքնակառավարման օրինանախագիծը:

Օրինանախագիծը պատգամավորների քննարկմանը ներկայացրեց Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքի առաջին փոխնախարար Թեմուր Զեբադաշվիլին:

Նշենք, որ խորհրդարանական կոմիտեներում օրինանախագծի քննարկմանը մասնակցեցին ոչ կառավարական կազմակերպությունների եւ ոչ խորհրդարանական կուսակցությունների ներկայացուցիչները:

Օրինանախագծի կապակցությամբ, դիտողություններ ներկայացրին նաեւ խորհրդարանական մեծամասնության անդամները: Մասնավորապես նշվեց, որ նման նշանակալի ու ծավալուն (շուրջ 1000 էջանոց) (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

արանախագծի արագացված աշխատակարար գով քննարկումը արդարացված չէ, եւ դրա համար պահանջվում է շատ ավելի տեսական ժամանակ:

Իր ելույթում Վրաստանի տարածաշրջանի էներգետիկական զարգացման եւ էներգամուտայնացման համար»,- հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին:

## «ՓՈՔՐԻԿ ԶԵՌՆԱՄԱՐՑ» ՕՐԵՆՍԳՐԻ ՄԱՐՏՈՒՄ

Վրաստանի խորհրդարանի՝ դեկտեմբերի 11-ի լիազույժար նիստում «Վրացական երազանք» կուլիցիայի եւ «Միասնական ազգային շարժման» պատգամավորների միջեւ բանավեճը վերածվեց ձեռնամարտի:

Ծեծկոտուքն սկսվեց նրանից հետո, երբ խորհրդարանական մեծամասնությունից պատգամավոր Սոսո Ջաճվիլանին բանավոր վիրավորանք հասցրեց ընդդիմադիր Գիորգի Բարամիձեին: Վերջինս նետվեց Ջաճվիլանու վրա: Հաշտված վարկյաններում տեղերից վեր են թռել նաեւ մյուս պատգամավորները, եւ համատարած ծեծկոտուք է ծավալվել: Ձեռնամարտը տեւել

է մի քանի րոպե: Խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին դատապարտեց տեղի ունեցածը եւ ընդմիջում հայտարարեց:

Մեքլաբանելով տեղի ունեցածը՝ Դավիթ Ուսուփաշվիլին հայտարարեց, որ խորհրդարանական մեծամասնությունը պետք է



յուրեղի նախագծի քննարկման ժամանակ խորհրդարանական փոքրամասնությանը դահլիճից հեռանալու պատրվակ տալու իրավունք չունենք:

### ԳՈՐԾԱԴԻՐ

## ՎԱՐՉԱՊԵՏԸ ՆԵՐԿԱՅԱՐԵՑ ՏԱՐԱԾԱՆԵՐԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԵՐԻՆ

ՍԱՄՅԻՆ-ԶԱՎԱԽՆԵՐԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Ե ՆԵՆԱԿՎԵԼ ԱՎԱԿԻ ՄԱՃՈՒՏԱՅԵՆ, ԻՍԿ ԲՎԵՍՈ ՔԱՐՁԻՈՒՄ՝ ԳԻՈՐԳԻ ՄԵՐԲԵՐԻՇՎԻԼԻՆ

Երեկ՝ դեկտեմբերի 13-ին, Վրաստանի կառավարության նիստում վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին նախարարներին ներկայացրեց Վրաստանի 9 տարածաշրջանների նահանգապետերին:



Նշենք, որ Սամցխե-Ջավախեթի նահանգապետ է նշանակվել ֆինանսիստ, 39 տարեկան Ակակի Մաճուտաձեն, իսկ Քվեմո Քարթլիում՝ իրավաբան, 43-ամյա Գիորգի Մղերիշվիլին: Ինչպես նշեց վարչապետը, նահանգապետերի վրա մեծ պատասխանատվություն է դրվում, քանզի նրանք երկրի տարածաշրջաններում ներկայացնելու են պետությունն ու կառավարությունը: Նա նորանշանակ նահանգապետերին կոչ արեց հնարավորինս ձեռնամուխ լինել իրենց տարածաշրջաններում բնակչության իրավիճակի բարելավման համար:

Նշենք, որ նախկինում նահանգապետերին նշանակում էր Վրաստանի նախագահը, իսկ հիմա, նոր սահմանադրության համաձայն, այդ իրավասությունը շնորհվել է վարչապետին: Ավելացնենք նաեւ, որ կառավարական գրասենյակի տարածաշրջանների եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերությունների դեպարտամենտի ղեկավարի պաշտոնում, վարչապետի առաջարկությամբ, Իրակլի Մելաշվիլու փոխարեն, նշանակվել է տնտեսագետ Ակակի Չխենկելին, ով մինչ այդ, Վրաստանի ներքին գործերի նախարարությունում զբաղեցնում էր Գլխավոր տեսչության դեպարտամենտի պետի առաջին տեղակալի պաշտոնը:

### ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## ՔՆՆԱՐԿՎԵՑ ԵՐԿՎՈՐՄ ՉԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Երեւանում անցկացվեց Սեւծովյան համագործակցության կազմակերպության անդամ երկրների արտաքին գործերի նախարարների 29-րդ նստաշրջանը, որին մասնակցում էր նաեւ Վրաստանի պատվիրակությունը արտաքին գործերի փոխնախարար Դավիթ Ջալաղամիայի գլխավորությամբ: Նստաշրջանը նվիրված էր այդ կազմակերպությունում Հայաստանի վեցամսյա նախագահության արդյունքների համարազուգանքին:



Նստաշրջանի շրջանակներում, հայկական կողմի նախաձեռնությամբ, կայացավ Դավիթ Ջալաղամիայի հանդիպումը Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին Վրաստանի եւ Հայաստանի միջեւ երկկողմ հարաբերությունների զարգացման դինամիկան: Ընդգծվեց մոտ ժամանակամիջոցում երկու երկրների նախագահների եւ վարչապետերի փոխալսելությունների իրականացման անհրաժեշտությունը: Հայկական կողմը կարելու է 2014 թվականի առաջին կեսին Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեի Հայաստան կատարելիք պաշտոնական այցը: Կարելու է նաեւ եր-

կու երկրների ԱԳ նախարարությունների միջեւ խորհրդատվությունների շարունակման անհրաժեշտությունը եւ վերոնշյալ ձեռնարկով քաղաքական հարցերին զուգընթաց, այլ ուղղություններին վերաբերող հարցերի քննարկման նպատակահարմարությունը: Հանդիպմանը արծարծվեցին տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի աշխատանքները, պայմանավորվածություն ձեռք բերվեց 2014թ. սկզբին հանձնաժողովի առաջիկա նիստն անցկացնելու վերաբերյալ: Հանդիպմանը ներկա էր Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Թեմուր Զարմանաշվիլին:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՅՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՅ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՍՈՐՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)


տանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին ընդգծեց ընդունված փաստաթղթի նշանակությունը՝ կարելու էլով ժողովրդավարական սկզբունքների ներդրումը...

ման ուղղությամբ կատարված այդ քայլի անհրաժեշտությունը:

Հատկանշական է, որ քննարկումները սկսվեցին առանց խորհրդարանական փոքրամասնության մասնակցության, որը տվյալ օրինակում անհրաժեշտ էր...

մշակել է այլընտրանքային նախագիծ:

Հիշեցնենք, որ դեռևս դեկտեմբերի 11-ին խորհրդարանի լիազուրկում նիստում տեղ գտած տեղափոխման փոքրամասնությունը հեռացել էր նիստերի դահլիճից:



ՈՒԿՐԱԻՆԱ

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐԻՆ ՄԱՅՂԱՆԻՑ ԴՈՒՐՍ ԵՆ ՄՂՈՒՄ

Կիևում մի քանի հազար հատուկ ջոկատայիններ եւ ներքին գործերի զինծառայողներ ընդհուպ մոտեցել են ԱՆկախության մայրաքաղաքի բարիկադերին եւ փորձում են դուրս մղել ցուցարարներին:

Վիկտոր Յանուկովիչը դիմել է ընդդիմությանը երկխոսություն սկսելու առաջարկով, սակայն ուկրաինական ընդդիմությունը մտադիր չէ իշխանության հետ բանակցություններ վարել քաղաքական ճգնաժամից երկրի դուրս գալու շուրջ, քանի որ չեն կատարվել իր առաջադրած պայմանները:

Կիևի իրադարձությունների կապակցությամբ, ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Բերրին «լիակատար ինքնատիրապետման» կոչ է արել Ուկրաինայի իշխանություններին:

Ուկրաինայում Եվրամիության ներկայացուցչությունը հաղորդել է, որ փորձում է կապվել իրավապահների հետ, որպեսզի թույլ չտա ուժի կիրառում բողոքի ելած քաղաքացիների դեմ: Եվրամիության դիվանագիտության ղեկավար Քեթրին Էշթոնն աստիճանաբար է հայտնել, որ իշխանություններն ուժ են կիրառում հանրահավաքի մասնակիցների նկատմամբ:

ՀԱՐԱՎԱՖՐԻԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՆՈՆ ՄԱՆԴԵԼԱՅԻ ՀՐԱԺԵՇԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դեկտեմբերի 10-ին Յոհաննեսբուրգում անցկացվեց Նելսոն Մանդելայի հրաժեշտի արարողությունը:

Արարողությանը մասնակցեցին պետությունների շուրջ 100 ղեկավարներ: Արարողությանը ներկա էին ԱՄՆ-ի նախագահ Օբաման՝ տիկնոջ՝ Միչելի հետ, ԱՄՆ նախկին նախագահ Ջորջ Բուշ կրտսերը՝ տիկնոջ՝ Լորայի հետ, Մեծ Բրիտանիայի արքայազն Չարլզը եւ վարչապետ Դեվիդ Քեմերոնը, Ռուսաստանի Դաշնության խորհրդի խոսնակ Վլադիմիր Մադուրոն, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը, Բրազիլիայի նախագահ Դիլմա Ռուսեֆը, Կուբայի Պետխորհրդի ղեկավար Ռաուլ Կաստրոն եւ ուրիշներ:

Հիշեցնենք, որ ՀԱԴ-ի առաջին սեւամորթ նախագահ, ապարտեհի դեմ պայքարի հռչակավոր մարտիկ, հաղադրության Նոբելյան մրցանակի դափնեկիր Նելսոն Մանդելան կյանքի 96-րդ տարում մահացել է դեկտեմբերի 5-ին:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

ԲԱՅՎԵՅ 400 ԿԻՈՎՈՒՍԱՆՈՅ

ԱՆԱՆՅԻՆԵ-ԲՈՐՉԻՄԱ ԷԼԵԿՏՐԱԶԱՐՈՐԴՄԱՆ ՆՈՐ ԳԻԾԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ծովյան գծի» նախագծի իրականացման շնորհիվ, կապահովվի Վրաստանի էներգահամակարգի կանոնավոր աշխատանքը եւ կբարելավվի Վրաստանի հարավային շրջանների էներգամատակարարումը, նշել է վարչապետը:

«Չենց որ ավարտվի Վրաստանի եւ Թուրքիայի էներգահամակարգերը կապող հաղորդման գծի շինարարությունը, մենք հնարավորություն կունենանք ամռան շրջանում իրականացնելու էլեկտրաէներգիայի ավելցուկի արտահանումը Թուրքիա»,- հայտարարեց վարչապետը:

«Դա հերթական վստահ քայլն է Վրաստանի էներգամատակարարության ուղղությամբ»,- հայտարարեց վարչապետը: Արարողությանը մասնակցեցին նաեւ Թուրքիայի էներգետիկայի եւ բնական ռեսուրսների նախարար Թամեր Իլդիզը, Ադրբեջանի արդյունաբերության եւ էներգետիկայի նախարար Նաթիկ Ալիևը, Վրաստանի նախարարների կաբինետի եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:



ԻՐԱՎԱԿԱՆ

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՅԻ ՍԱՇՄԱՆՄԱՆ ԲԱՐՁՐ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Թբիլիսիի «Ռեդիսոն» հյուրանոցում անցկացվեց դատական բարեփոխումների հարցերին նվիրված «Բանասրկությունների նվազեցում» հանուն լավ ապագայի» խորհրդածրոյի:



Խորհրդածրոյում իր ելույթում Վրաստանի գերագույն դատարանի նախագահ Կոնստանտին Կուբլաշվիլին նշեց, որ վերջին 10-12 տարիների ընթացքում խափանման միջոցի օգտագործման առումով դատական պրակտիկան խիստ փոխվել է: «Արդեն 2012 թվականին որպես բանասրկություն խափանման միջոցի օգտագործումը նվազեց 42 տոկոսով: 2013 թվականին դատարանը եւ դատավորները սահմանեցին է՛լ ավելի բարձր չափորոշիչներ այդ հարցի քննարկման ժամանակ: Բարձր չափորոշիչներ սահմանեցին նաեւ գաղտնախուսումների եւ հետեւումների հարցով: Հատկանշական է, որ վերոնշյալի կապակցությամբ բարձրացվել են նաեւ դատախազության չափորոշիչները:

Կոտե Կուբլաշվիլին դրական գնահատեց որպես խափանման միջոց տնային կալանքի կիրառումը: «Օրակարգում դրված է որպես խափանման միջոց տնային կալանքի կիրառումը, ինչը նախատեսում է էլեկտրոնային ապարանջանի միջոցով տնային կալանքում գտնվող անձին վերահսկելու հնարավորություն: Այդ հարցը ակտիվորեն քննարկվում է»,- հայտարարեց գերագույն դատարանի նախագահը:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վրաստանում կրկին արդարացում են կանանց նկատմամբ ամուսինների բռնի վերաբերմունքը: Միավորված ազգերի կազմակերպության կանանց կազմակերպությունների եւ հասարակական քաղաքականության ինստիտուտի կողմից անցկացված հարցման արդյունքում, 34,6 տոկոսը գտնում է, որ կնոջ նկատմամբ ամուսնու բռնի վերաբերմունքը արդարացված է, եթե պակաս ուշադրություն է դարձնում երեխաների դաստիարակության վրա, վիճում է ամուսնու հետ, կերակուր չի պատրաստում, հրաժարվում է սեռական կապից եւ առանց թույլտվության դուրս է գալիս տանից:

Կնոջ նկատմամբ բռնի վերաբերմունքը հանցագործություն է համարում հարցման ենթարկվածների 69 տոկոսը, իսկ 25 տոկոսը գտնում է, որ դա զուտ ներքնտանեկան հարց է: Ինչ վերաբերում է կանանց նկատմամբ բռնության հարցով կանանց վերաբերմունքին, ապա հարցման ենթարկվածների 69 տոկոսը գտնում է, որ կինը մնան դեպքերում պետք է բաժանվի, իսկ 17 տոկոսը գերադասելի է համարում համբերության դրսեւորումը: Ամուսնու կողմից բռնության դեպքում, ոստիկանությանը դիմելու խորհուրդ է տալիս հարցման ենթարկվածների կեսը: Ոստիկանությանը դիմելուց հրաժարման գլխավոր պատճառը համարում են ամոթը, հասարակության կողմից՝ պարսպանքը եւ անօգնականության զգացումը:

Հարցման ենթարկվածների 77,8 տոկոսը ընտանեկան բռնություն համարում է հաճախակի երեւույթ, իսկ 9,6 տոկոսը զգուշանում է, որ բռնության գոհ կարող է դառնալ իր մոտիկ անձնավորությունը:

Նշենք, որ վերոնշյալ հարցումը անց է կացվել օգոստոս-սեպտեմբերին, Թբիլիսիում, Սամեգրելո-Վերին Սվանեթիում եւ Կախեթիում: Հարցման է ենթարկվել 1500 մարդ, որի 65,1 տոկոսը կանայք էին, իսկ 34,9 տոկոսը տղամարդիկ:

ՊԵՏՐՅՈՒՋԵ-2014

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐԿՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Պետբյուջեի համաձայն, հաջորդ տարի ծրագրվում է հարկային եկամուտների տեսքով ստանալ 6,82 միլիարդ լարի: Եկամտային հատվածում գրանցների ծավալը կազմում է 144 միլիոն լարի, այն ժամանակ, երբ ընթացիկ տարում ծրագրված գրանցները կազմել էին 202,5 միլիոն լարի: Այլ եկամուտների տեսքով, ծրագրվում է մոբիլիզացնել 355 միլիոն լարի, ինչը 55 միլիոնով գերազանցում է ընթացիկ տարվա բյուջեի պարամետրը:

տարվա բյուջեում ՀՆԱ-ի ծրագրված աճը կազմելու էր 6 տոկոս, սակայն, վիճակագրական ծառայության տվյալներով, 2013 թվականի առաջին տասը ամիսների ընթացքում աճը կազմել է ընդամենը 1,9 տոկոս: Կառավարությունը կանխագծում է, որ տարվա վերջի համար տնտեսական իրական աճը կկազմի 2,5 տոկոս:

Ծախսերի մասով ավելացվում է բռնագաղթվածների ամենամսյա նպաստը: Այն հաջորդ տարվա մարտի 1-ից կկազմի 45 լարի: Միաժամանակ, կատարվելու է նաեւ դատարանի աշխատակիցների աշխատավարձի ավելացման մասին կառավարության խոստումը: 2014 թվականի բյուջեի առաջնահերթային ուղղություններն են առողջապահությունը, կրթությունը, գյուղատնտեսությունը եւ ենթակառուցների զարգացումը, սակայն համապատասխան նախարարությունների ֆինանսավորումը բյուջեի նախնական նախագծի համեմատությամբ, նկատելիորեն կրճատվել է: Միայն Էկոնոմիկայի նախարարության ֆինանսավորումը 62 միլիոն լարիով ավելացվել է նախնական նախագծի համեմատությամբ:

2014 թվականի պետբյուջեի համաձայն, նախորդ տարվա 2,345 միլիարդի դիմաց աշխատանքի, առողջապահության եւ սոցիա-

լական պաշտպանության նախարարությունը կստանա 2,658 միլիարդ լարիի ֆինանսավորում: Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցների նախարարությունը, նախորդ տարվա 928 միլիոնի դիմաց, կունենա 875 միլիոն լարիի ֆինանսավորում: 673,2 միլիոն լարիի փոխարեն, կրթության նախարարության բյուջեն ավելացվել է եւ կկազմի 754,3 միլիոն լարի: Ավելացվել է գյուղատնտեսության նախարարության ֆինանսավորումը: Նախորդ տարվա 241 միլիոն լարիի փոխարեն, հաջորդ տարի այն կֆինանսավորվի 290 միլիոն լարիով: Անփոփոխ է մնացել պաշտպանության, ներքին գործերի եւ մշակույթի ու հուշարձանների պաշտպանության նախարարությունների բյուջեն այն, նախորդ տարվա նման, կազմում է համապատասխանաբար՝ 660, 570 եւ 80 միլիոն լարի: Նախորդ տարվա համեմատությամբ, 4 միլիոնով նվազեցվել է ֆինանսների նախարարության բյուջեն՝ այն կազմում է 96 միլիոն լարի: 32 միլիոն լարիով ավելացվել է կրճատման նախարարության բյուջեն, այն հասցվել է 87 միլիոն լարիի: Մոտավորապես 4 միլիոնով նվազել է էներգետիկայի նախարարության ֆինանսավորումը: Այն հաջորդ տարի կունենա 114,6 միլիոն լարիի ֆինանսավորում: 10-ական միլիոն լարիով նվազել է արդա-

րադատության, արտաքին գործերի նախարարությունների ֆինանսավորումը:

Նոր բյուջեի համաձայն, պետական գրասենյակի ֆինանսավորման կրկնապատկման ֆոնի վրա կես միլիոն լարիով նվազեցվել է խորհրդարանի, 20 հազար լարիով նախագահի աշխատակազմի ֆինանսավորումը: Հաջորդ տարվա համար կիսվել է նախագահի պահուստային հիմնադրամը, այն կկազմի 5 միլիոն լարի, իսկ ինչ վերաբերում է կառավարության պահուստային հիմնադրամին, այն կրկին կազմում է 50 միլիոն լարի: Մի քանի հազար լարիով ավելացվել է նախագահի պահուստային աշխատակազմի ֆինանսավորումը: Ավելացվել է նաեւ տեղական ինքնակառավարման միավորների ֆինանսավորումը: Այդ առումով, բացառությամբ է կազմում Թբիլիսի, որի տրանսֆերտային գումարը նվազեցվել է 49,9 միլիոն լարիով:

Նշենք, որ դեկտեմբերի 12-ին խորհրդարանը հաստատեց բյուջեի արդեն հստակեցված նախագիծը: Ինչպես նշեց ֆինանսների նախարար Նոդար Խաղոյրին, իրենք հաշվի են առել նախագծի նախորդ քննարկումների ժամանակ պատգամավորների կողմից արված դիտողությունները, թեպետ անփոփոխ են թողել պետբյուջեով հայտարարված առաջնահերթությունները:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՍԻՈՒԹՅՈՒՆ

ՄՏՈՐԱԳՐՎԵԼ Ե ԵՎՐԱՍԻՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ


Դեկտեմբերի 13-ին Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն եւ Լիտվայի՝ ԵՄ-ն նախագահող երկրի նրա պաշտոնակից Լինաս Լինկյավիչուսը Բրյուսելում արձանագրություն են ստորագրել Եվրամիության ծրագրերին Վրաստանի մասնակցության մասին:

«Արձանագրության ստորագրումը եւս մեկ նշանակալի քայլ է Եվրամիության հետ մերձեցման ճանապարհին»,- ասված է Վրաստանի ԱԳ նախարարության հաղորդագրության մեջ:

Իր հերթին, Լինկյավիչուսը հայտարարեց, որ ԵՄ-ն Վրաստանին ծրագրեր է առաջարկել առողջապահության, մշակույթի, գիտահետազոտական ոլորտում եւ աջակցություն փոքր ու միջին ձեռնարկություններին: «Նման քվաքանակով ծրագրեր դեռ երբեք չեն առաջարկվել հարեւանության եվրոպական

քաղաքականության մասնակցների»,- նշեց Լիտվայի ԱԳ նախարարը:

Դեկտեմբերի 12-ից Մայա Փանջիկիձեն գտնվում էր Բրյուսելում, որտեղ անցկացվեց Վրաստանի եւ Եվրամիության համագործակցության խորհրդի 14-րդ լիազուցված նիստը: Վրաստանի եւ ԵՄ-ի համագործակցության խորհրդի նիստերն անցկացվում են տարեկան մեկ անգամ:



ՂԱԿԻԹ ՊԱՏԱՐԱԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վրաստանի նախագահի խորհրդարանական քարտուղար է նշանակվել իրավաբան Դավիթ Պատարաիան: Դավիթ Պատարաիան ավարտել է Թբիլիսիի համալսարանի միջազգային իրավունքի եւ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: Աշխատել է Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովում երկրի խորհրդարանի աշխատակազմում: Ջրաղվել է նաեւ փաստաբանի գործունեությամբ: Թբիլիսիի համալսարանում դասախոսություններ է կարդում միջազգային հարաբերությունների թեմայով:



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՄՇԱԿՎՈՒՄ Ե ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ

Վրաստանի վարչապետին առընթեր տնտեսական խորհրդի հերթական աշխատանքային նիստում որոշում ընդունվեց մշակել շինարարության նոր օրենսգիրք, որի նախապատրաստման գործընթացում անմիջականորեն կմասնակցի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին:

Խորհրդի նիստում վարչապետը հետաքրքրվեց շինարարության որակով եւ ցանկություն հայտնեց կարգավորել որակի վերահսկողության ինստիտուցիոնալ մեխանիզմները: Վարչապետի որոշմամբ,

շինարարության օրենսգրքի մշակման գործին ներգրավվելու են մասնագետներն ու ոչ կառավարական հատվածի ներկայացուցիչները:

Տնտեսական խորհրդում քննարկվե-

ցին նաեւ էկոնոմիկային առնչվող ընթացիկ հարցեր եւ ներդրումային առաջարկություններ:

Նիստում մշակվեց, որ իշխանությունները կշարունակեն աջակցել սակավահող ֆերմերներին: Գարնանային գյուղատնտեսական աշխատանքները 2014 թվականին էլ կֆինանսավորվեն ինչպես պետական բյուջեից, այնպես էլ անմիջականորեն մասնավոր հիմնադրամներից:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՆՈՂԱՐ ԽԱՂՈՒՐԻ. «ԼԱՐԻԻ ԿՈՒՐՍԸ ԿՏԱՏԱՆՎԻ ՆԵՐԿԱՅԻՍ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ»



Վրաստանի ֆինանսների նախարար Նողար Խաղուրիձե լարիի կուրսի անկման մեջ վտանգավոր ոչինչ չի տեսնում. «Արտակարգ ոչինչ տեղի չի ունենում: Եթե հետեւեք հարեւան երկրների տարադրամին, ապա կտեսնեք, որ դրամը մույնպես տատանվում են, էկոնոմիկայում դա սովորական երեւույթ է»,- հայտարարեց Խաղուրիձե:

Նախարարի խոսքերով, 2004 թվականին 1 դոլարը 2.25 լարի էր, 2011-ին՝ 1.91, իսկ 2008 թվականի նոյեմբերին մեկ գիշերվա ընթացքում լարին արժեզրկվեց 20 միավորով, եւ դոլարի համեմատությամբ 1.45-ից հասավ 1.65-ի: «Խուճապի պատճառ չկա, Ազգային բանկը ունի 3 միլիարդ դոլարի պահուստ եւ, ամենակարեւորը, նկատվում է վճարման հաշվեկշիռի գոր-

ծընթացի կարգավորում, ինչը նպաստում է լարիի փոխանակման կուրսի կայունացմանը»,- հայտարարեց Նողար Խաղուրիձե: Ըստ նախարարի, լարիի կուրսը կտատանվի ներկայիս պարամետրերի շրջանակներում:

ԵՎՐԱՍԻՆՏԵԳՐՈՒՄ

ԱԼԵՔՍԻ ՊԵՏՐԻԱՇՎԻԼԻ. «ԱՌՆՎԱՋՆ ՄԵՎ ՏԱՐՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ ԿՏԱՌԱԳՐԻ ԱՍՈՑԻԱՅՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ»

Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման հարցերի պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլին հայտարարեց, որ առնվազն մեկ տարում Վրաստանը կստորագրի Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագիրը:

«Վրաստանի իշխանությունները ինչպես գործադիր, այնպես էլ օրենսդրական, աշխատում են լրիվ ծանրաբեռնվածությամբ, որպեսզի բարեփոխվեն, որոնք անշրջելի են, շարունակվեն: Ասոցիացման պայմանագրի ստորագրմանը ոչինչ չի խանգարի: Վրաստանը հնարավորինս կանի, որպեսզի կանխի Եվրամիության

եւ նրա անդամների կողմից բյուրոկրատական եւ տեխնիկական բոլոր արգելքները: Համոզված եմ, որ առնվազն մեկ տարում մենք կտոնենք ասոցիացման համաձայնագրի ստորագրումը»,- հայտարարեց Պետրիաշվիլին:



ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԳԻՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՋ ՍՊԱՍՈՒՄ Ե 9-10 ԱՄՍՎԱ ԼԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ»



«Մեզ սպասում է 9-10 ամսվա լարված աշխատանք, որի ընթացքում մենք իրականացնելու ենք վիթխարի ծավալի գործեր»,- հայտարարեց Վրաստանի էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին:

Նրա խոսքերով, Վրաստանի վարչապետի հանձնարարությամբ ձեւավորվել է տնտեսական խորհուրդ, որի հետ գործելու է նաեւ համակարգման խումբը: Այդ խումբը

կատարելու է գործադիրի համար ուղեցույցի դեր: «Դա վերաբերում է տնտեսության տարբեր ոլորտների բարեփոխումներին, կստեղծվեն բաժիններ ենթակառուցվածքի որակի, փոխընդունման մեխանիզմների, պարենի պիտանիության օրենսդրության եւ մրցակցության բա-

ժիններ»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին: Ըստ նախարարի, խոսքը վերաբերում է ապրանքի տեղաշարժի ազատականացմանը, սպասարկմանն ու կապիտալին, որոնք առանձնակի դրական նշանակություն կունենան վրաց էկոնոմիկայի համար:

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ՔՆՆԱՐԿՎԵՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ

Թբիլիսիի «Ռեդիսոն» հյուրանոցում տնտեսական քաղաքականության հետազոտման կենտրոնը (EPRC) անցկացրեց «Գյուղատնտեսությունը մարտահրավերները եւ ընթացիկ քաղաքականությունը» նոր հաշվետվության շնորհանդեսը:

Փաստաթղթում ներկայացված է ներկա դրությամբ գյուղատնտեսության ոլորտում առկա իրավիճակի վերլուծությունը: Հաշվետվությունում ասված

է, որ ներկա դրությամբ ոլորտում նկատվել են դրական տեղաշարժեր, թեպետ առանձին ուղղությունները որոշակի կասկած են հարուցում, օրինակ, սակավահող ֆերմերների աջակ-

ցության ծրագիրը: «Ռեզոնանս համակարգերի վերականգնումը կարող է միայն դրական գնահատվել, թեպետ ոռոգման հարցերը չեն կարող լուծվել միանշանակ ծրագրերով ու միջոցառումներով: Ընթացիկ տարում ագրոհատվածին տրված վարկերի ծավալը, նախորդ տարվա համեմատությամբ, ենթադրաբար կենա-

պատկվի: Դա մի կողմից պատկառելի աճ է, սակայն մյուս կողմից գյուղատնտեսության բաժինը վարկային ողջ ծավալում շատ աննշան է եւ կազմում է ընդամենը 3 տոկոս: Ընդ որում, գյուղատնտեսությունը համախառն ներքին արտադրանքում ներդրում է դրա ծավալի 8-9 տոկոսը»,- նշված է հաշվետվության մեջ:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ, ՆԱԽԱԳԱՐԻՆ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Ընդհանուր վարչական օրենսգրքի պահանջներին համապատասխան, Վրաստանի ժողովրդական պաշտպանը օմբուդսմենի աշխատակազմի գործունեության մասին տեղեկատվությունը ներկայացրել է խորհրդարանին, նախագահին եւ վարչապետին: Միաժամանակ, օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն, հաշվետվությունը հանրային հրապարակման համար առաքվել է «Օրենսդրական տեղեկատվության»:

Դեկտեմբերի 12-ի Թբիլիսիի «Ռեդիսոն» հյուրանոցում Վրաստանի ժողովրդական պաշտպանը անցկացրեց 2013 թվականի գործունեության հաշվետվության շնորհանդեսը: Ուշա Նանուաշվիլին ներկայացրեց տարվա ընթացքում ձեռքբերումները եւ մարտահրավերները: Հաշվետվության դրույթների շուրջ անցկացվեց քննարկում:

ՎՐԱՑԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՒԹՅՈՒՆ ԳՅԱՆՋԱՅՈՒՄ

Վրաստանը ծրագրում է հյուպատոսություն բացել Ադրբեյջանի երկրորդ քաղաք Գյանջայում (Գանձակ) եւ Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում: Այս մասին ասված է Վրաստանի արտագործնախարարության հաղորդագրության մեջ:

Գյանջայում Վրաստանի հյուպատոս է նշանակվել Սամուկա Բլավաձեն: Ինչ վերաբերում է Ֆրանկֆուրտին, Վրաստանի ԱԳ-ն սպասում է գերմանական կողմից համապատասխան փաստաթղթերին, ինչից հետո հյուպատոս կնշանակվի: Ենթադրվում է, որ Գյանջայում եւ Ֆրանկֆուրտում Վրաստանի հյուպատոսությունները կբացվեն մոտ ժամանակներու:

ԿՐԹԱԿԱՆ

# ԹԱՄԱՐ ՍԱՆԻԿԻՉԵ. «2014 ԹՎԱԿԱՆԻՑ ԶԻ ԿԻՐԱՐԿՎԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՄԻԱՅՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ ՊԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ»

## ՀԱՐՅԱԶԻՐՈՅ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԹԱՄԱՐ ՍԱՆԻԿԻՉԵԻ ՀԵՏ

*- Տիկին Թամար, մոտ մեկ ամիս առաջ հայտարարեցին, որ մանկավարժների հավաստագրման քննություններին տեսական քննությանը կավելացվի նաև գործնական մասը: Գուցե մանրամասնե՞իք, թե ինչպիսի՞ն կլինի այդ քննությունը:*

- Մանկավարժների պաշտոնական առաջընթացի եւ գնահատման նոր, համալիր համակարգը դեռեւս վերամշակման փուլում է: Սխեմայում սահմանվելու են նաեւ մասնագիտական զարգացման մեխանիզմները:

Այդ սխեմայում ներառվելու են բոլոր մանկավարժները, եւ նրանք զարգացման հավասար հնարավորություններ կունենան: Աշխատավարձի ավելացումն էլ մեծապես կախված կլինի անմիջականորեն մանկավարժներից: Տվյալ պարագայում, առանձնակի նշանակություն ունի գործող սխեմայից նոր սխեմայի անցումը: Ընթացքի մեջ է ուսուցիչների առաջընթացի գնահատման վարկային համակարգի կազմավորումը, որը կսահմանի ուսուցիչների կատգորիաներն ու հավաքած միավորների քանակությունը:

Նոր մոդելի շրջանակներում, առավելագույնս հաշվի կառնվեն ուսուցիչների նախապատրաստական դասընթացներն ու տարբերակիվությունների դրսևորումները: Մանկավարժների հավաստագրման այլընտրանքային սխեման ներկայումս քննարկման փուլում է: Դրանում ակտիվորեն ներառվել են բոլոր այն կառույցները, որոնք ներգրավված են դրա իրականացման գործում:

*- Կրթության նախկին նախարար Դիմիտրի Շաշկինի կարգադրությամբ, 2014 թվականից դպրոցներում աշխատելու էին միայն հավաստագրված ուսուցիչները: Այդ որոշումը փոփոխման ենթակա՞ է, թե՞ ոչ, եւ ի՞նչ է սպասվում այն ուսուցիչներին, ովքեր 2014 թվականի սկզբներին հավաստագրեր չեն ունենա: Գնահատվելու են նաև մեծահասակ դրությամբ, ուսուցիչների քանի՞ տոկոսն ունի հավաստագիր:*

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսուցիչների հավաստագրումը փոփոխությունների է ենթարկվել, վերոնշյալ որոշումը չի կիրարկվի: Իսկ ինչ վերաբերում է հավաստագրված ուսուցիչների քանակությանը, ապա ներկա դրությամբ հավաստագրվել է ուսուցչական ողջ բանակի շուրջ 20 տոկոսը:

*- Իսկ քանի՞ն են հավաստագրված տնօրենները, եւ այդ թվաքանակությունը բավարարո՞ւմ է, արդյոք, Վրաստանի բոլոր դպրոցներին:*

*րին: Խոսում են նաև, որ հաջորդ տարում հանրային դպրոցների տնօրենների համար ծրագրված է անցկացնել հավաստագրման եւս մի քննություն:*

- Դեկտեմբերի վերջին կավարտվի տնօրենների հավաստագրման գործընթացի երկրորդ բաժինը (հարցազրույցը), եւ, բնականաբար, հայտնի կդառնա, թե հավաստագրված քանի տնօրեն կլինի Վրաստանում:

Ինչպես գիտեք, տնօրենների հավաստագրումը իրականացվում է թեստավորման եւ նախարարության կողմից ձեւավորված հանձնաժողովի հետ հարցազրույցի արդյունքներով: Նրանից հետո, երբ թեկնածուն ստանում է տնօրենի հավաստագիրը, նա կոնկրետ դպրոցում տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար անցնելու է համապատասխան մրցույթը:

Նա նախարարությանը ներկայացնելու է դպրոցի ռազմավարական զարգացման իր տեսակետը: Ծրագրի ընդունումից հետո, նախարարությունը տնօրենի թեկնածուին կան թեկնածուներին ընտրության համար ներկայացնում է հոգաբարձական խորհրդին: Վերջնական որոշումը ընդունում է հոգաբարձական խորհուրդը:

Բնականաբար, մրցակցության միջավայրի ստեղծման համար անհրաժեշտ է իրականացնել կադրերի համապատասխան մոբիլիզացումը: Ելնելով դրանից՝ կարծում են, որ 2014 թվականին տնօրենների հավաստագրման գործընթացը կշարունակվի:

*- Անցնող տարվա ընթացքում անցկացված հավաստագրման քննություններին ուսուցիչների եւ տնօրինության թեկնածուների ճնշող մեծամասնությունը չհաղթահարեց նվազագույն արգելագիծը: Չոր կարծիքով, ինչո՞ւ էր դա պայմանավորված:*

- Նախ մի քանի խոսք ուսուցիչների մասին: Միայն թեստավորման միջոցով ամհնար է գնահատել ուսուցչի իրավասության մակարդակը: Այդ պատճառով էլ գնահատման մոդելը փոխում ենք: Նախ անհրաժեշտ է, որ պետությունը

մանկավարժի մասնագիտական առաջընթացի եւ զարգացման համար ստեղծի համապատասխան պայմաններ, ապա նոր իրականացնի նրանց իրավասությունների գնահատումը:

Ըստ իս, ինչպես պայմանների ստեղծման, այնպես էլ գնահատման ոլորտներում նշանակալի բացթողում թույլ տրվեց իրավիճակի կարգավորման համար ձեռնարկեցինք համապատասխան միջոցներ, եւ կարծում են, որ մոտ ապագա-

վություն ներկայացնել հասարակայնությանը:

*- Վերջերս շատ է խոսվում ուսումնական գործընթացի նորմալ անցկացման համար ֆինանսավորման անբավարարության մասին, ինչն էլ ավելի է ծանրանում ծանային ժամանակահատվածում:*

- Ելնելով աշխարհագրական դիրքից եւ կլիմայական պայմաններից՝ բարձրալեռ բնակավայրերում գործող հանրային դպրոցների վաուչերային ֆինանսավորումը զգալիորեն ավելացվել է: Այդ դպրոցները, առանձնապես ձմեռային ժամանակահատվածում, ջեռուցման տեսանկյունից, ծանր վիճակի մեջ էին հայտնվում:

Միաժամանակ, ֆինանսավորման նախկին մոդելով իրականացվող ֆինանսավորումը այդ դպրոցներին զարգանալու եւ առաջընթացի հնարավորություններ չէր ընձեռում: Իսկ հիմա վաուչերային ֆինանսավորման գործում կատարված փոփոխությունները տնօրեններին հնարավորություն են ընձեռում գումարները ուղղել կոնկրետ անհրաժեշտությունների կարգավորմանը:

Դպրոցների ֆինանսավորման նոր համակարգում հաշվի է առնվում ինկլուզիվ կրթության յուրափաստությունը, սահմանափակ հնարավորություններով աշակերտներ ունեցող դպրոցները ստանում են լրացուցիչ ֆինանսավորում:

*- Իսկ ի՞նչ վիճակում են դպրոցների ենթակառուցվածքը առանձնապես տարածաշրջաններում:*

- 2013 թվականին հանրակրթական եւ գիտական ենթակառուցվածքի զարգացման գործակալության կողմից ուսումնասիրվեց Վրաստանի հանրային դպրոցների շինություններում առկա իրավիճակը: Դպրոցների մեծ մասը աղետալի վիճակում են: Ուսումնասիրությունից հետո, հստակեցվեցին առաջնահերթությունները (կտուրներ,

դուռ-պատուհաններ, գազիֆիկացում, ջեռուցման համակարգ եւ այլն): Վրաստանի մասշտաբով, 699 հանրային դպրոցներում, որից 647-ը գործում են տարածաշրջաններում, անցկացվեց վերանորոգման աշխատանքներ: Շուրջ 70 դպրոցներում իրականացվեց գազիֆիկացում, 21-ում վերանորոգվեց ջեռուցման համակարգը, 9-ում անցկացվեցին ամրացման աշխատանքներ: Ներկա դրությամբ, վերանորոգման աշխատանքները շարունակվում են 36 դպրոցներում, այդ թվում՝ 17 դպրոցներում անց են կացվում գազիֆիկացման աշխատանքներ:

Սկսվել է հանրային 9 դպրոցի շինարարություն, այն կշարունակվի 2014 թվականին:

Ավելացնեմ, որ 2014 թվականին հանրային դպրոցներում իրականացվող աշխատանքները տարվելու են վերոնշյալ առաջնահերթությունների հաշվառմամբ: Նաեւ հստակեցվել է, թե որ տարածաշրջաններում քանի նոր դպրոց է կառուցվելու:

*- Քննությունների ազգային կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլին դեմ էր կրթության նախարարության նախաձեռնությամբ բուհեր այն դիմորդների ընդունակությանը, ովքեր միասնական ազգային քննությունների արդյունքներով ոչ մի բուհ չէին ընդունվել: Չնայած նրա բողոքին, Դուք որոշումից չհրաժարվեցիք այն պատրվակով, որ այդ ցուցակում հայտնված 700 դիմորդները հաղթահարել էին բոլոր առարկաների նվազագույն իմացության մակարդակը: Չեք զստում, որ նման չճրագրված զիջումները որոշակիորեն նվազեցնում են նախարարության վարկանիշը:*

- Նախ ինչեցնեմ, որ կրկնական ընդունելությունը առնչվեց այն դիմորդներին, ովքեր քննությունները հանձնել էին, հաղթահարել նվազագույնի մակարդակը: Դա դիմորդների այն խումբն էր, ովքեր խճճվեցին այս տարի ներդրած նորանորոգվածներում: Նրանք իրենց դիմումում մի քանի բուհ նշեցին, թեպետ կարող էին նշել շատ ավելին, կամ միայն քննությունները եւ անգամ դրանից հետո, նորացնել կամ փոխել բուհերի ցուցակը: Քանի որ նորանորոգվածները նոր էր ներդրվում, շատերը լրիվությամբ չէին հասցրել ընկալել դրա իմաստը, այդ պատճառով մենք որոշեցինք դիմորդներին ընձեռել բուհ ընդունվելու նոր հնարավորություն: Չեն կարծում դիմորդներին ընդառաջ կատարված այս քայլով նախարարության վարկանիշը վնասվել:

ՍԱԼՈՒՆԵ ՍԱՐԻՇՎԻԼԻ

## ՍԿՍՎԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԱԼԵԶՈՒ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ



*«Վրաստան» թերթի նախորդ համարներից ընթերցողը տեսյակ է, որ Հայաստանի Հանրապետության կրթության ու գիտության նախարարության կողմից Վրաստանի հայկական դպրոցներին «Հայոց լեզվի ու գրականության» դասագրքերով ապահովելու հարցը երկու երկրների նախարարությունների միջեւ ակտիվ կարգավորման փուլում էր, ոչ պակաս ակտիվ էր նաև հարցը բարձրացնողների շրջանակը:*

Եվ ահա, այդքան երկար ժամանակ պահանջող գործընթացն ավարտին հասցվեց: Արդեն դեկտեմբերի 13-ին, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունում սկսվել է երկրի հայալեզու դպրոցներին եւ մասնաճյուղերին մայրենի դասագրքերի տրամադրման գործընթացը: Այս հարցով մենք դիմեցինք Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու ուսումնական նյութերի համակարգող Կարինե Մանուկյանին:

- Այո, ընդգծեմ, որ այս ուսումնական տարվա համար լրիվությամբ ապահովվում են առաջին, տասներորդ, տասնմեկերորդ եւ տասներկուերորդ դասարանները: Առաջինից չորրորդ դասարանների դասագրքերին կցված են նաև աշխատանքային տետրեր: Երկրորդից իններորդ դասարանների համար առաքված գրքերի թիվը շատ քիչ է այս փուլում, ուստի մեր ուսուցիչներին խորհուրդ ենք տալիս, ուսանում-ուսուցման ժամանակ հաշվի առնել եղած օրինակների մեջ առկա նորությունները եւ այլընտրանքային ռեսուրսների օգնությամբ (դպրոցական, էլեկտրոնային գրադարաններ) ուսուցանել դրանք: Կարելի է նաև համարում առանձնացնել, որ տասներ-

կումայ կրթական համակարգին անցնելուց հետո, Վրաստանի հայկական դպրոցների ավագ դասարանները առաջին անգամ են ապահովվում մայրենի ձեռնարկով, ինչն, անշուշտ, դրական խթան կհանդիսանա մեր սաների ուսումնադաստիարակչական առաջընթացին: Ասենք, որ բացի դասագրքերից, դպրոցների համար նախատեսված են ուսուցչական սեղաններ ու աթոռներ, որոնք եւս տրամադրվում են կրթօջախներին: Մեր շնորհակալությունը Վրաստանի եւ Հայաստանի Հանրապետության կրթության ու գիտության նախարարություններին ի դեմս նախարարներ Թամար ՍանիկիՉեի եւ Արմեն Աշոտյանի, գործընթացի բոլոր աջակից մասնակիցներին, ովքեր իրականացրին այս կարևոր ծրագիրը:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ  
Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության  
ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու  
ուսումնական նյութերի համակարգող